

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Ավելին իմանալու համար ծանոթացեք սույն փաստաթղթի վերջում ներկայացված հեղինակային իրավունքի վերաբերյալ նշումներին:

© Council of Europe/European Court of Human Rights, 2013. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու թիվ 130

2010թ. մայիս

Dokic-ն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի - 6518/04

Վճիռ 27.05.2010թ. [Բաժանմունք IV]

Թիվ 1 Արձանագրության Հոդված 1

Թիվ 1 Արձանագրության Հոդված 1-1

Գույքից անարգել օգտվելու իրավունք

Երկրում ընթացող պատերազմի ընթացքում ռազմական գործողություններին մասնակցելու հետևանքով բնակարանի նկատմամբ տիրապետման իրավունքը վերականգնելու մերժում.
խախտում

Փաստեր. 1980-ականներին, դիմումատուն աշխատում էր որպես դասախոս Սարանյուր հիմնադրված ռազմական դպրոցում և բնակվում էր ռազմական դպրոցի կողմից հատկացված բնակարանում: 1992թ. մարտին նա փորձում է գնել այդ բնակարանը: Չնայած նրան, որ նա վճարում էր բնակարանի ամբողջ գումարը, տեղական իշխանությունները հրաժարվում են գրանցել նրա սեփականության իրավունքը, քանի որ ռազմական բնակարանների վաճառքն այդ պահին ժամանակավորապես կասեցված է լինում: Գրեթե այդ նույն ժամանակահատվածում Բոսնիա և Հերցեգովինայում սկսվում է պատերազմը: Դիմումատուի ռազմական դպրոցը տեղափոխվում է Սերբիա և նա լքում է Սարանյուն, որպեսզի միանա Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության զինված ուժերին: Պատերազմից հետո դիմումատուն ցանկանում է վերականգնել բնակարանի նկատմամբ իր տիրապետման իրավունքը, բայց նրա խնդրանքը մերժվում է, քանի որ վերջինս չի կարողանում ապացուցել, որ նա փախստականի կամ տեղահանված անձի կարգավիճակ ունի, ինչպես պահանջում էր համապատասխան օրենսդրությունը: Նույնիսկ օրենքում կատարված հետագա փոփոխությունների արդյունքում այդ սահմանափակման կիրառումը մնում է անփոփոխ այն անձանց նկատմամբ, ովքեր նախկինում ծառայել էին նախկին Հարավսլավիայի իրավահաջորդ պետություններից որևէ մեկում և փորձում էին վերականգնել ռազմական բնակարանների նկատմամբ իրենց տիրապետման իրավունքը:

Մարդու իրավունքների հանձնաժողովը ներկայացրած դիմումատուի հետագա բողոքը մերժվում է, քանի որ Հանձնաժողովը գտավ, որ նրա ծառայությունը Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության զինված ուժերում վկայում է Բոսնիա և Հերցեգովինայի նկատմամբ դիմումատուի անհավատարմության մասին: Հաշվի առնելով բնակարանների լուրջ պակասը և այն հանգամանքը, որ դիմումատուն փոխհատուցման իրավունք է ունեցել՝ տեղի է ունեցել միջամտություն նրա սեփականությունից օգտվելու իրավունքին:

Իրավունք՝ Թիվ 1 Արձանագրություն Հոդված 1. Դատարանը տեղյակ էր տեղական ուժեղ հակադրության մասին, որը գոյություն ուներ այն անձանց նկատմամբ, ովքեր ծառայել էին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունում և վերադարձել իրենց նախկինում պատերազմած երկիր: Այդ ամենի պատճառ էր հանդիսացել այն, որ նրանք մասնակցել էին Բոսնիա և Հերցեգովինայում տեղի ունեցող ռազմական գործողություններին, մասնավորապես՝ Սարաևոյում, որը պատերազմի ընթացքում շրջափակվել և ենթարկվել էր ուրակոծության: Այնուամենայնիվ, չկար որևէ ապացույց, որ դիմումատուն Բոսնիա և Հերցեգովինայում մասնակցել էր որևէ ռազմական կամ պատերազմական գործողությունների: Դիմումատուի նկատմամբ ցուցաբերված նման վերաբերմունքը գլխավորապես պայմանավորված էր նրանով, որ վերջինս ծառայել էր զինված ուժերում, ինչը վկայում էր նրա էթնիկ ծագման մասին: Ինչ վերաբերում է կառավարության այն փաստարկին, որ բնակարանների պակաս է եղել, ինչպես նաև անհրաժեշտ է եղել բնակեցնել զինված ուժերում ծառայող և բնակարան չունեցող անձանց, ապա տրամադրված վիճակագրական տվյալները չեն հաստատել, որ այդ բնակարանները օգտագործվել են պաշտպանության կարիք ունեցողներին բնակեցնելու համար: Տվյալները հաստատել են միայն այն, որ ռազմական բնակարանների մեծ մասը հատկացվել է պատերազմի վետերաններին, հաշմանդամներին և տեղական բանակի զոհվածների ընտանիքների անդամներին՝ չնչելով նրանց բնակարանային վիճակը կամ եկամուտները: Վերջապես, ոչ փոխհատուցման չափը, որը դիմումատուին պետք է վճարեին, և ոչ էլ Սարաևոյում գտնվող բնակարանի համար վճարված գումարի վերադարձը չէր համապատասխանում բնակարանի իրական շուկայական գնին: Նման հանգամանքներում Դատարանը եզրակացրեց, որ դիմումատուի՝ սեփականության իրավունքի և հանրային շահի պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը չի պահպանվել:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 41. 60,000 եվրո (EUR)՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 5,000 եվրո (EUR)՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

© Council of Europe/European Court of Human Rights
This summary by the Registry does not bind the Court.

Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դատարանի քարտուղարության այս ամփոփումը պարտադիր չէ Դատարանի համար

Սեղմեք այստեղ [Նախադեպային տեղեկատվությունների համար](#)

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին, որը պատասխանատու չէ թարգմանության որակի համար: Այն կարելի է բեռնել HUDOC-ից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայից (<http://hudoc.echr.coe.int>), կամ տվյալների ցանկացած այլ բազայից, որին HUDOC-ը տրամադրել է փաստաթուղթը: Այն կարող է վերաթողարկվել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ գործի անվանումը ներկայացվի ամբողջական և ուղեկցվի վերը նշված հեղինակային իրավունքի նշումներով, ինչպես նաև Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդին հղումով: Առևտրային նպատակներով սույն թարգմանությունը մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելու դեպքում, հարկ է այդ մասին տեղեկացնել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2013

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

©Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int.